

323

Kyley m² h.
Terry m² h

Pheonix 1883

8-82
6-19

EB 2003

(338)

8-82

8-12

у

Зимой

Бутырье. ч. 15.

❖❖❖ ЧИРЧИК ❖❖❖

1004
14981
4

1882

1883

Ն Ա. Խ Ա. Բ Ա. Ն

Այս վայրաքարչ, այս սաստիկ նեղ աշխարհ-ում, վարք բարքի ախտացեալ գործվիների մէջ, որոնք յաճախ և յաճախ իրեւ թանձը մէգ սպատում և թաղում են իրենց ծոցում բարոյական ուրար, անփոխարինելի են այն բուլէներն որ հոգ-ւով զգայունը սուղ-երեխն կարողանում է անց-ուցանել մի պարզ և վճիռ օդում, մի երկնային գաւառում, երկնային ոգիների հետ։ Այդ պարզ և վճիռ օդը, այդ երկնային գաւառը, բանատեղծ-ների, երգիչների ոլորտն է. և այլ թնչ են բան-աստեղծները, եթէ ոչ երկնային վսեմ ոգիներ։ Նոցա հետ շնչելն ազնուանալ է. նոցա հետ հաղ-որդուելը՝ մեծանալ։ Նոքա ձեզ բաւական կամք կուտան, եթէ չունիք. նոքա ձեզ բաւական համ-բերութիւն կը բաշխեն, եթէ պակաս է ձերը. նոքա ձեզ կ'ուսուցանեն կը եւ, բայց և գործել՝ բայց և տոկաւ, յուսահատուել բնաւ երէք։

ԽԱՂԿՈՒՆՔ

1

Дозволено цензурою. Тифлисъ. 2 Января 1883 г.
Типографія И. Мартиросіанца, Орбеліан. ул., д. № 5



ՆԱԽԱԲԱՆ

Բախտը չի ժպտում ձեզ երեսին, շատ մի հոգաք.
Նոքա ձեզ կը խրախուսեն արհամարհել այն. նա
գետնաքարը է, նա զանգուած է նիւթի հետ, և
վերջապէս, նա յաճախ չար դե է իւր ստացողի
համար և, չբարեփոխուած ու չազնուացած, կը
խեղդէ նորան. Նոքա կը ճանաչեցնեն ձեզ մի
այլ բան որ բարձր է քան բախտը. Նոքա կը բե-
րեն ձեր աշքի առջեւ այն փիւնիկը՝ որ ժամանակ
ժամանակ մոխրանում և ամէն անգամ իւր մո-
խրեց առաջնիցն աւելի գեղեցիկ ու փառաւոր
կերպարանքով յարութիւն առնում. Նոքա կուտան
ձեզ մտաւոր, հոգւոյ աշխարհի հարստութիւնը:

Բանաստեղծների գրախալից, ուր ես, աղ-
քասոս, երբեմն այցի եմ գնացած եղել, ժողովիւ
եմ ծաղիկներ և հայ նարօտով փունջ կապել:
Ինձ ներուած չէ այդ փունջն ամբողջապէս մա-
տուցանել հայ գրականութեան սեղանի վրայ.
Ստիպուած եմ հատիկ հատիկ, ըստ ներելոյ կար-
ողութեանս, հանել հանդէս: Ելչանիկ, շատ եր-
ջանիկ կը համարեմ անձս, եթէ արդիւնքիցն
երեխ, որ ես էլ մի թեթև ծառայութիւն եմ ար-
ել այն գրական գործին որն հայի սերտումտքին
ըղձական ու սուրբ պէտք է համարուի:

Ա. Մ. Եղիշեան (Պետրոսին)

Ա.

ԼԱԽԱԲԱՆ ԺԱՅՈՒ

(ԼեռտոնՏՈՎ.)

Կրկնարդէմ, նորու իւրաքանչըն իւր օլելվան ընդունու,
մայուի ների ծոցի վերայ խոշոշ աշնջում էր Տիկ անու.
Վաղեց ամէն կրողէլ նորուն անուի, բախրին հոխուու.
— Մըն' բարու, ամուին առայ, հորի է երլաւմ ես ըշտառ:

Բայց իւրագիւ հընու տեղ Տոր շոր իւր երար ժամանակ:
Ո. յլ ի՞նչ անեմ, որ, այս ցածրում, Տորու չէ առող իւր Գընեց.
Ուսուի բարեաւ, բարի ծայուի, ի՞նչ էկո Էկը Երթեմու:
Որ գուցէ այլ երբէս բընու չը գոմ անցնիմ այս պեղից:

Ուսուց ծըղիս, անբարտուաւ, Տիկն այդ օր Երթեմու:
Բարձը մէնում էր ինժամանէր այս հըսկային շէրի Գագալը.
Բայց այդ օրից իւր իսումծոր մակարի պուէ Տի իսրուաւ:
Տեհնը եցու լուսածորոն արդասուաց Տի փայլուն իսլ:

26 Փետր. 1876:

Բ.

Ա. Մ Պ Ք

(Լեբանոնակ.)

Ո՞վ, անապատ երկընքում,
Դուք, այդ սահուն ամպերդ,
Որ, լուսումուռ, անկայուն,
Կըսըէք կապօյտ գաշտերդ,
Ինձ աէս, որ եմ մի տարագիր՝ երկընքում,
Դուք էլ գուցէ տարագիր էք երկընքում:

 Ո՞վ ձեզ հիւսսից վըտարեց,
Գէս հարաւ ձեզ ով մըզում.
Գուոզ աստուած մի արեց,
Թագաւորի մի ցասում.
Զերթ յանցաւանը պատուհասուում էք այդպէս,
Կամ նահասամի էք դուք երդ ինձի աէս:

 Ո՞չ գուք մին օր, ծիծաղ օկով,
Մարգագեսնից ցոլացաք,
Սիպտակ թևերդ բանալով
Նուրբ տարըթին վեր թըռաք
Եւ, երկընքում՝ ազատ, առանց հայրենիաց,
Գիտէք իսկ ոչ թնչ է լինելն աքսորուած.

26 Փետր. 1876:

Գ.

Վ. Ի Ռ Ա. Ի Ռ Ն

(Լեբանոնակ.)

Տեսնում էք այդ վիրաւորն,
Որ թաւալուում է գետնին,
Փոքր ինչ էլ ու կը մեռնի
Մօտեկ անմարդ անտառին,
Առանց գէջդ որ մի սիրտ էլ
Արգահատուի եւր վըշտին,
Բայց որ կըսկին դառըն ցաւ
Յաւելացնում է վէրքին,
Որ աւելի մի խիստ խոց
Բաց է անում մէջ սըրտին,
Այն է որ թնքն կըան սոսկ,
Իսկ այլք արդէն չեն յեշում:

26 Փետր. 1876:

Դ.

ԳՈՐՆՅՅԵՍ.—ՎԵՐՇԻՆԻ

(ԼԵՐՄՈՒՏՈՒ)

Սարերն հանդարտ քընած են
Խաւարամած երկոնքում.
Թարմ ցողիսով ռռոգուած՝
Չորելն ամէն են լլուռած.
Ամայացեալ ճամբուծը
Փոշին իջնում ու նըստում.
Տերեք մընում են անշարժ,
Քամին թեն է կախ քըցում.
—Սակաւ էլ դեռ ըսպասիք,
Եւ քու աչքեդ կըգայ քուն:

26 Փետր. 1876:

Ե.

ՀՐԱԺԵՇԻ ՈՂՋՈՅՆ

ԿԸՍՊԻՍԿԱՆԻՆ

(ԲԵՐՏՈՒԶԶԻ ՄԱՐԴԻՆՍԿԻ)

Սրաթե քան հողմը, արշաւում էի ծով-
ափի երկայնութեան վրայ, ես ինձ ամեհի երի-
վարիս քմահաճութեանն յանձնելով:
Տեղ տուէք, տեղ տուէք. կայծակներ թըռ-
չում են, փոշին մըրկում է, շըջակայք անհետ
են լինում:

Ո՛քան քաղցը է թռչնոյ թւեր ունե-
նալը, սլանալ արագ քան միտքը: Ո՛քան
թեթեանում է մարդուս սիրտը՝ սրընթաց
կտրելով միջոցը և կանխելով ժամանակը:
Ո՛քիսի սրտհեշտութիւն կայ արագութեան
մէջ. որպիսի բանաստեղծութիւն այդ ճեղար-
ուակնունք

շաւում՝ ուր աներեւութանում է ստեղծագործը.
նրակիսի հեշտանք, երբ շնչերս հատկլուում է
ինչպէս սիրով յափշտակութեան բոպէում:

Սրագութիւնը բոլոր դարուց ուժն է,
մեքենական ուժը. իսկ մեր դարուս բարոյա-
կան ուժը:

Յառաջ ուրեմն, յառաջ, դու, իմ Դարա-
բազու քաջալանջ նժոյգ: Ո՛, ուզում ես ինձ-
նից ազատուել. տանում ես ինձ: Խածոտէ
սանձդ, ծառացիր, ոստոստիր. որքան և վայր-
ագ լինիս, կը գտնեմ մի այլ կենդանի քեզնից
աւելի վայրագ, որև հեշտեաւ կը նուաճէ քեզ:

Սպա, քամին երեսիս՝ աչքս կրակոտ՝
շրթունքս կոկուծ իրար սղմած՝ շիտկեցի ձիս
դէպի ծովակողմը:

Տեսել էք երբէք շանթը ալեաց վրայ
ընկնելիս: Նման նմին ձիս կանդ տուաւ, կը
կամենայի ասել՝ կորաւ կոհակների մէջ, զարհ-
ուրած նոցա մուընչիւնից. վայրի ձիերի խմբի
պէս՝ ալիքները յարձակուում էին իւր վրայ,
փրփրադէզ բաշերը քամուն տալով, և ապա
լետ էին ընկրըկուում իբրև սոսկալով, և ինքն
իւր սե, կայծակնացայտ, զարմացած, վախե-
ցած և կասկածոտ աչքերով նայում էր նոցա
մօտենալուն և լետ փախչելուն. բաց էր անում
ծխաշունչ քիթը, այն անծանօթ մատեանների
հոտն էր քաշում, և, ամէն անդամ որ մի

ալիք խորտակուում էր իւր կրծքի գէմ՝ թափ
էր տալիս գլուխը. ազատուելու համար աղի
փրփութից որ ողողում էր ականջներն ու բաշը,
սալուած սմբակովը գոփում էր աւազի վրայ
և ցոյց էր տալիս ատամները, պատրաստ խա-
ծել իւր անըմբունելի ախոյտնները. և ես
շոյում շօշափում էի իւր կամարաձև վիզը, և
նա փոքր առ փոքր հանդարտուում էր, քըս-
տըմնելով սակայն ցանդ խոնաւ թշնամու ամ-
էն մի բախումից:

Մի բարկ շունչ հիւսսից մղում էր ալիքը
դէպի ծովափը, որպէս մի արծիւ վանում է
կարապների խումբը. երկինքը մթագին էր,
արեւի ճառագալիթները շեղ անցնում էին հող-
մից հալածուած ամպերի միջով և մերթ ընդ
մերթ լուսաւորում էին տամուկ փոշին որ
ելնում էր նոցա կատարներից. խոնարհեցնում
էի գլուխս ալդ անձրեւի տակ և լիածոց ծը-
ծում էի այն իմ հայրենիքից եկող քամին:
Կարծում էի թէ լսում եմ իւր ներդաշնակ սուլ-
մանց մէջ այն սիրեցեալ էակների, այն իմ
սրաիս սիրեկան ընտանեաց ձայնը, որոնց այն-
քան երկար ժամտնակից ի վեր չէի տեսել.
ամենայն ինչ, զանգերի ողբանուագ հունչը,
վոլհովի ափանց սոխակների գելգելը, կար նո-
րանում. կարծում էի որ նա բերում էր ինձ
սիրուհուս անուշաբոյը շունչը, բեւեռային

Ճեան զովութիւնը, մինչև անդամ միզամած Ռուսաստանիս ծաղկների անորոշ բոլոր: Նրջապատում էր նա ինձ մանկութեանս լիշտակներով, և սիրտս իրեն էր կանչում բոլոր իւր վաղանցուկ երևակալութիւնները, բոլոր իւր ցնդուած երազները, ուրուականք՝ որոնց ամենատիւրները ունէին ժպիտը շըրթունքների վրայ, ցնորք՝ որոնց ամենագուարթները ունէին արտասուքը աչքի մէջ. բոլոր այդ լիշտակները ծիծեռնակների նման հասնում էին, աստղերի նման փայլփում, ծաղկանց նման բացուում: Դո՞ւք էիք արդարեւ, ուժգին զգացմունք, փայլուն տեսիլներ, ցոլացնղ մասնկունք իմ էութեանս, անցեալ աւուրցս աստուածալին փայլակներ, որոնց վայելքը ունեցայ մի քանի ըոպէ և որ արդէն կորուսած եմ ընդ միշտ: Դո՞ւք էիք արդարեւ. փափագանօք էի ձեզ կարօտում և վաղուց սպասում. վերջապէս ահա եկաք. կեցէք ինձ մօտ պահիկ մի, կացէք չորս ըոլորս. ո՛վ, գիշերից դուրս եկած ոպիներդ, մի՛ շտապիք նոյն տեղը դառնալու: Տեսէք, ահա զըկաբաց գալիս եմ ձեզ. անըմբունելի երեւոյթ: Ո՛հ, մի փախչիք տակաւին. ո՛հ, մի անցնիք այդպէս արագ. տուէք ինձ գէթ ժամանակ ձեզ «երթաք բարեաւ» ասելու:

Անհետացաւ բոլորը. մըրիկը գոչում է, ալիք մոընչում են:

Բայց և ինչ են լիշտակները, եթէ ոչ հողմից մղուած մեր երևակալութեան ալիքը: Երանի նորան որ ի թռչանի բըռնում է այդ լիշտակներից մի կտոր, և որ կորզում է իւր մանուկ օրերի ոսկի թռչունիցը մի փետուր:

Մրտիս համար ներկայն այդպէս մոռանալը մի տօն էլ. մի անուշ զգացմունք՝ խառն դառն մտածութեանց հետ, ինչպէս մի մանիշակ՝ որ բուսնում է ժակոերի մէջ:

Մեկնուելով կասպիականից, վերջին անգամ զուարձանում էի իւր տեսքով. վաղիւ վերջին հրաժարականը տալու եմ իրեն:

Ով անսապնջական, անսապատ և տիսուր ծով, սրացաւով եմ սակայն բաժանուում քեզնից: Դու իմ խորհրդոց մտերիմ ընկերն էիր, ներքին խորհրդականը իմ ըզզացմանց: Լեզի ալիքներդ ընդունում էին արտասուքս, և, երբ ձանձրացած էի լինում մարդկանցից, ես ինձնից մանաւանդ, գալիս էի դէպի քեզ. քո մըրիկներիդ աղաղակը միայն կարողանում էր խլացնել սրտիս ամբոխումբ: Մարդկալին ձայնը լուսում էր բնութեան վսեմ լեզուի դէմ, որ, միշտ նոյնը, միշտ զանազան է սակայն, և որոյ ձայնը, մեզ լաւ ծանօթ, բայց և այնպէս մնում է անհասկանալի:

Այլ չէ. հայհոյութիւն է ասածս, վատթար ևս քան այդ, մի սնոտիաբանութիւն:

Երբեմն հասկանում էի ծովի լեզուն, հոգիս
սուզուում էր մի կերպ՝ մանգնիսական քնի
մէջ. գու մրմնջում էիր ինձ, ո՞ ծով, քո հնա-
դարեան աւանդութիւնքդ. հայեացքս անցնում
էր քո ջրերիդ խորը՝ փնտռելու համար
խորհրդաւոր ծածուկներդ: Գուշակում էի ան-
դունդներիդ հրաշալիքը: Սրագ կարդում էի
այն սրբազները որ կոհակներդ գծում էին
ափիդ աւազի վրայ կամ դրոշմում էին ժայռ-
երիդ կողին:

Փաղաքուշ՝ բայց սնոտի միտք, իմ գոռ-
ոզութեանս գուստը: Ո՞չ կը թողում քո
եղերքդ՝ կերժամ, ուրիշների նման առանց
լուծելու առեղծուածդ, ո՞ սոսկալի կասպիա-
կան: Ծոցդ, իրեն բաց անողին, ոչ թէ գիրք,
այլ՝ գերեզման է գաւուում: Երկնից նման
փակուած ես մնում զիտութեանը. նորա
պէս, միայն մտքին ես մատչելի, որ շատ ան-
գամ մատնում է մեզ և համարեա միշտ խա-
բում: Այլ և մարդը կարողացել է պատռել
երկրակին մթնոլորտը, որոյ միջով, աչքը հե-
ռադիտակով զինուած կարողացել է հետա-
խուզել ծիրկաթինը, և վեր ելնել մինչեւ
ահազին Սատուրնոսի փալակնացալտ ոլորտը:
Բայց ինչ աչք, ո՞ ծով, կարողացել է ընկղմուել
քո խորոցդ մէջ: Ո՞վ է կարողացել վերցնել
խոնաւ վարագուրդ: Խեղճ մարդ, ողորմելի և

անզօր արարած, գատապարտուած ես խեցիներ
հաւաքելու նորա ջրերի եղերքում, և միտքդ
ցամաքեցնել գուշակելու թէ ուր արդեօք
ծածկուում են սաթի հիւլէներն և մարգա-
րիտների բուստերն: Մշտնջնական և անսահ-
ման Սփինքս գու, ծով, ընկլուզում ես նորան՝
իսկոյնեեթ՝ երբ նա ձեռներէց ելնում է քո
թիկունքդ, և Աստուած գիտէ թէ լաւիտե-
նականութեան սեամքից անց կենալիս ստա-
նում է արդեօք մահուանից քո առեղծուածիդ
գիտութիւնը:

Բայց ինչ փոյթ, ես ամենուրեք և միշտ
սիրել եմ ծովը. սիրում եմ իւր անշարժու-
թիւնը, երբ մակերևոլթը՝ հայելու պէս միտ-
պաղաղ՝ մնում է մունչ և հանդարտ, և երբ
ցոլացնում է իւր ջրերի մէջ աստեղազարդ
երկինքը. սիրում եմ իւր շնչառութեան ելեէջը,
կեանքի կրիւր իւր կապտորակ ծոցում, որ կեն-
դանացնում և մաքրում է ամենալին բան. սիր-
ում եմ ծարաւուտ երկրին զրկած մէգերը
երկնից ձեռօք ուր կորցնում են իրենց գառ-
նութիւնը. բայց աւելի շատ սիրում եմ իւր
ծփանքներն և ալէկոծութիւնք. սիրում եմ,
երբ արելը հերձոտում է թուխթուխ ամպ-
երը և կրակէ սահանքով ծածկում է կոհակ-
ները որ վազում են խոնաւ անապատի վրայ,
մինչ ուրիշները կոռից դադրածի պէս իրար

են ժողովուում, բորբոքուում, մոշնչում՝ բարկութեամբ ու պակուցմամբ, և սուզուում են քո խորերիդ մէջ՝ իրենց հրաբորբոք գիսակը մարելու։ Դեռ ուրիշները ճգնում են՝ վազելով դլփիններից անցնելու, որոնք ծովափղի տգեղութեան հետ ունին և ծիծեռնակի սրաթեութիւնը։ Կան որ կայծակնացալու խրձներ են նետում նաւի կողերին՝ որ արհամարհում է իւր թողած երկիրը, իւր ակօսած ջուրը, իւր պատառած օդը. խիզախ տիտան, որ քաջաբար յարձակուում է կոռուի, որ կտրում՝ ցրում՝ խորակում է ալիքը։ Սլնպէս, որ կարելի կը լինէր ասել թէ կոհակները՝ որ սպառնալից նետուում են իւր դէմ՝ յետ են ընկրըկուում ժպտելով և ցրուում են, զերթ փոշի, իրենց յաղթականի ոտի տակ։ Սիրում եմ նաև ալեկոծութիւնը գիշերը, երբ լուսինն ամպոց միջն ցոյց է տալիս իւր դալուկ դէմքը որպէս մահը, սաւառնելով տիեզերքի մէջ, և երբ, մնջիկ անցնելով երկնից կամարը, ձգում է ծովի երեսին իւր տժգոյն պատանը. կոհակները ալդ պահուն վեր են բարձրանում ինչպէս Օսիանի դիւցազունների ուրուները իւրեանց սեաւ զրահների մէջ իրենց սպիտակ մազերով և փայլուն ցօղով որ շողշողում է ճակատներին որպէս ադամանդեալ սպակ։ Մուեկնաբար յարձակուում են կոռուի, ընկնում իրար

1004
18
00
15

ետեկց, իրար հասնում, իրար վրայ ընկնում, կայծեր ցալտեցնում և անհետ կորընչում՝ փշուելով ուրիշ իրենց ետեկց հասած նոր կոհակների գնդերից։ Սոցա միջէն յանկարծ բարձրանում են վիշապ մրբիկներն, ամպերով արտախուրակուած մահու այդ հսկաներն, որ տրոփում են մոլեգին, ծածկելով ծովը սպիտակ փրփրով։ Մի քայլ ես, և ահա հսկայն կը կործանէ նաւը։ Բայց մի փալլակ պրծնում է սորա կողքից, որոտման ձայնը պայթում, և հեղուկ հսկայն, ոռումբից երկուս կիսուած, ծալուում է ինքն իր վրայ և ասես յետ է գառնում մտնում անդունդը՝ ուստի դուրս էր պրծել։

Սիրում եմ դարձեալ՝ տեսնել ծովու անգօր բարկութիւնը ափի ժայռերի դէմ, որ արգելում են նորան ծովեղերքը ասպատակելուց. բարձրանում է նոցա դէմ օձի նման շշելով և յետ վայր է ընկնում՝ շան հանգոյն լիզելով ժայռի ոտքը. բայց փոքր յետոյ դարձեալ վեր է կանգնում աւելի կատաղի, յարձակուում է նորա վրայ ու խածում՝ ոռնալով ու մըմուալով վագրի տեսակ։ Վերջը, նենսգաւոր մարդու նման, ուժ է թափում, տակից յամը փորելով, փլցնելու՝ ինչ չի կարողանում մէկից տապալել. կրծում է այն, քերում. կրկին բաց է անում ժամանակից տրուած վէրքերը, և, ան- ԽՍԴԿՈՒՆՔ 3



խոնջ խոյի նման, անդաշար բախում է նորան՝ խոնաւ գլխովը. կը ցանկանար, ինչպէս նախքան ջրհեղեղեան օրերը, ողողել միանգամ և երկերը, որ, իւր ծոցից դուրս գալուց ի վեր, այնքան հեղ ծածկուած է եղել իրանից: Յետ, Սատուրնոս, յետ. չը պիտի կուլ տաս քո իսկ ծնունդդ. դու նորան մարմինը տուիր, Աստուած տուեց հոգին, այսինքն մարդը, այսինքն բանականութիւնը: Կարելի՞ է որ այդուհետեւ նա քո որպետ լինի:

Այո՛, շատ ծովեր եմ տեսել, բոլորն եմ սիրել: Բայց դու, վայրագ կասպիական, քեզ բոլոր միւսներից աւելի պիտի սիրեմ. դու, թշուառութեանս մէջ, իմ միակ բարեկամս եղար. մարմինս մահից պաշտպանեցիր, հոգիս՝ ապականութիւնից. նաւի մի բեկորի նման, նման մի մոլորահետ կարասւոյ, ընկեցիկ եղայ ընութեան ամայի ափանց վրայ, և, միայնիկ, երեսէ ձգուած, զգացի որ այլ չպիտիր յոյս դնէի դաշտաց հունձերի վրայ, կամ՝ անտառի աւարի: Ես քեզ չէի սլրպտում, ո՛ ծով, կորալիոններիցդ կամ մարգարիտներից ձեռք բերելու. չէի փնտուած ո՛չ ճոխութիւն, ո՛չ սին ցանկութեան լագեցումն. ոչ, քեզանից խընդրում էի միայն խորհուրդ՝ կեանքը ոովորելու, սիրտս հանդարտեցնելու, կըքերս մեղմացնելու: Մաղթում էի մօտիկնալ տարերքին, ոչ

թէ այնոնք ինձ հպատակեցնելու, այլ թէ ինձ քաղցր միանգամայն և մեծ բան էր երեւում զուգաւորել սիրտը, որ է զաւակ երկրի, մտքի հետ՝ որ է գուստը երկնից: Քո ափանց վրայ մարդն ինձանից չէր ծածկում ստեղծագործութիւնը, ամբոխը չէր արգելք լինում ինձ՝ որ միանամ ծիեզերքին. սա երևում էր ալարզապէս իմ հոգւոյս. թափառում էի ըստ կամի իւր անհուն ոլորտում. նորա և իմ միջև սահմաններն անհետանում էին. ինքս ինձ մոռանալը միացնում էր մի քաղցր ու ներքին ուրախութեան մէջ մասնական ու տիեզերական կեանքը, և ժամանակի կաթիւն ընկըզմուում էր յաւիտենականութեան ովկիանուի մէջ:

Բացի գորանից, զգում էի ինձ դէպի քեզ ձգուած մեր ճակատագրի նմանութիւնից. քո ջրերդ աւելի գառն և աւելի լկուած են քան միւս ովկիանուներինը: Լքուած փակուած՝ վայրենատեսիլ ափանցդ բանդում՝ հառաջում ես չկարենալուդ խառնել ալիքդ ուրիշ ալիքների. չես ճանաչում ոչ մակրնթացութիւնը ոչ տեղատուութիւնը, և, մոլեզնութեանդ ամենակատաղի պահուն, չես կարող վանել խութերդ, և ոչ ժայթքել վրփուրդ դարերից ի վեր նշանակուած սահմաններիցդ դէն. Աստուած միայն գիտէ թէ ինչ ես անում այն-

քան մեծամեծ գետերը որ ընդունում ես ծոցդ,
հատուցանելով միայն մի աննշանակ առուրք
օդին՝ որ ոչ թափ անցաւ երբէք քո ստորեր-
կրալին հրաբուխներիդ մէջ, որոնցից ոմանք
ժակթքում են հուր, ալլք՝ տիղմ: Ո՞ զիտէ
քանի՞ քանի ազգեր, որոնց անունները մոռաց-
ուած են, կտրել անցել են ափանցդ երկայն-
ութիւնը կամ տկօսել ալիքներդ. որքան ան-
ձանօթ զոհեր խորասուզուել են վհերիդ մէջ:
Ոչ նոցա և ոչ սոցա հետքերից մինը չես պա-
հել դու. միայն մերթ ընդ մերթ ափունքիդ
վրայ ձգուած մի նշխար ցոյց է տալիս թէ
որքան գանձեր թագուած կան խորոցդ մէջ:

Ծով, տարիները չեն որ խորշոմում են
ճակատդ. երկնալին կրքերի մըրթիներն են.
ահաւոր ես լինում ալդ ժամանակ, ամբոխա-
լոյզ և ահազնագոչ. բայց և երբեմն թափանց-
իկ ես և խաղաղաւէտ. թոլլ ես տալիս արեւի
շողերին և մարդու տեսութեանը ծոցիդ մէջ
լողանալու և քնացնում ես նորան, ծովեզեր-
քիդ վրայ, մանուկ երեխալի պէս՝ որին մըր-
մընջում է մարն օրօրոցի երգեր:

Այս, մթին ծով, շատ կրքեր ունիմ քոյին-
ներիդ նման. իսկ և դու ունիս նմանութիւն
ինձ հետ. բայց դու չունիս ոչ ազատավար
միտք և ոչ իրաց ծանօթութիւնը: Ուրիշ
կերպ չես կարող լինել քան ինչ որ ես. ալլ ես

կը կաբողանալի լինել ալ՝ քան որ եմա: Պիտի
ասեմ Բայրոնի հետ. – Տատասկներն, որ քաղեցի,
իմ իսկական ձեռներովս էին խնամուած. արդ
ինձ խալթում են և արիւնս է վազում. սակ-
ալայն պէտք էր գիտենալի ես թէ ալդոխի սեր-
մըն ինչպիսի պառուղ էր բերելու:

Սատեղեալ պսակը վաեմ է, ճաճանչաւոր.
դափնունը՝ փառահեղ. կաղնունը՝ պատուաւոր.
ծաղկներինը՝ հեշտալի, ես միայն գիտեմ թէ
ինչ է տատասկեալ պսակը:

Մնաս բարով ուրեմն, Կասպիտական ծով.
մնաս բարեաւ այս լեռին անգամս: Ստէպ
ցանկացել էի քեզ տեսնել, և տեսալ ոչ իմ
կամքով: Ակամայ բաժանուում եմ քեզանից,
և սակայն կը մաղթէի՝ քեզ ալլ ևս չտեսնել,
եթէ միայն չտարածես դու յանկարծ ալիք-
ներդ մինչ իմ հալըենիքս:

Վերջին անգամ հիանալով դիտում էի
բարկութեանդ սոսկալի և ահազին պատկերը:
Կոհակներդ ուռած, գլուխները բարձրացու-
ցած, գլորուում էին գէպի ափունքը, ծռուում
ու փոթորկելով խորտակուում էին պատերին
զարկուելով ու ծովեզըեալ աշտարակներին, և,
վրաներից թռչելով, ասպատակում էին ափի
աւազը. հեղուկ հիւէներդ, հողմից յափշտակ-
ուած, կազմում էին մի փալակնացալտ միգ-
ամած ամպ, որ բարձրանում էր ծովի վրայ

և, նման գետնառիւծին, գունափոխուում էր՝
կանանչից կապոյտն անցնելով և փայլելուց
լետոյ խաւարամած դառնալով:

Երբ հուսկ ուժ զգացի քեզ թողնելու
հեռանալու, ո՞ ծով, ինձ երևեցաւ որ քո մըռ-
ունչդ և քամունը միացած էին իրենց ցաւն
յայտնելու. որ նոյն իսկ ալիքներդ, զերթ մա-
տաղ եղբայրներ, աղաջում էին որ իրենց էլ
հետս առնեմ թաճքիս վրա, և իմ ձիս, բոլոր-
ովին գոհ, զգալով որ ազատութիւնը իրեն
էի դարձնում, մէկ ոստելով միայն դուրս հա-
նեց ինձ ջրէն:

Երբ մտայ Ալէքսանդրի և Խոսրովի քա-
ղաքը, այտերս թրջուած էին, բայց, ով ծով,
այդ թացութիւնը քեզանից չէր:

Խոյէքէր. 1875:

2.

Ի ՇԻՐԻՄ ՈՌՈՒՍՈՅԻՆ

(ՇԻՌԻՄ)

Արձան, մերոյ ժամանակիս ամօթանք,
Յաւեժական նախատակիր Մայք-Երկրիդ,
Ողջոյն լնդ քեզ, ընուսոյին դու շերիմ:
Խաղաղութէն և անդորրը կենացըդ քոց նըշխարաց.
Խաղաղութեան ու անդորրու եղեւը ի խընդէր:
Զիսղաղութէն և զանդուքը՝ աստ միայն գըտեր:

Ե՞րբ վէքըն հին ուրեմն, աղէ, փակեսցին:
Էր երբեմն և էր խաւար, և իմաստունն ընն մեռան.
Լոյս է այժմ, իմաստունն և՛ս մեռանի,
Կորեաւ Սոկեաս իմաստակաց ընդ ձեռըն.
Ի քրիստոնեայց վիշտոս կըըէ և անկանի ընուսոյ:
Որուսոյ ոք զմարդիկ ե քրիստոնեայցըն խընդէր:



